Կրկ 21740

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 3661
11 OCT 2021
Կից ___ Նշում ___

«08» հոկտեմբեր 2021թ. No 3789 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103089821 առ 15.09.2021թ. փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի, բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

Արտաքս 11.10.2021 ժ 10 25

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի վերաձևակերպված հավաստագրի տրամադրումը հայտատուին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

08.10.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2021 թվականի **08 հոկտեմբեր- ի** **N3789- Ա հրամանի**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ (ՀԱՋՈՐԴ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՁԵՎ)

| *հ* | **Առևտրային անվանումը** | **Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը** | **Դեղաձևը** | **Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը** | **Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)** | **երկիր** | **Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)** | **երկիր** | **Բաց թողն-ման կարգա-վիճակը** | **Եզրակացու-թյան համար և ամսաթիվ** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1.* | Ուրորեկ | սիլոդոսին | դեղապատիճներ կոշտ | 8մգ; (30/3x10/) բլիստերում, (90/9x10/) բլիստերում | Ռեկորդատի Քիմիական և Դեղագործական Արտադրություն Ս.պ.Ա., Վիա Չիվիտալի, 1-20148 Միլան | Իտալիա | Ռեկորդատի Իռլանդիա ՍՊԸ, Ռահենս Իստ, Ռինգասկիդի, Քո. Քորկ | Իռլանդիա | Դ | 18078/1 15.09.2021 |
| *2.* | Զանիդիպ-Ռեկորդատի | լերկանիդիպին (լերկանիդիպինի հիդրոքլորիդ) | դեղահատեր թաղանթապատ | 10մգ; (28/2x14/) բլիստերում, (28/1x28/) բլիստերում, (56/4x14/) բլիստերում | Ռեկորդատի Քիմիական և Դեղագործական Արտադրություն Ս.պ.Ա., Վիա Չիվիտալի, 1-20148 Միլան | Իտալիա | Ռեկորդատի Իռլանդիա ՍՊԸ, Ռահենս Իստ, Ռինգասկիդի, Քո. Քորկ | Իռլանդիա | Դ | 20068/1 15.09.2021 |
| *3.* | Զանիդիպ-Ռեկորդատի | լերկանիդիպին (լերկանիդիպինի հիդրոքլորիդ) | դեղահատեր թաղանթապատ | 20մգ; (28/2x14/) բլիստերում, (56/4x14/) բլիստերում | Ռեկորդատի Քիմիական և Դեղագործական Արտադրություն Ս.պ.Ա., Վիա Չիվիտալի, 1-20148 Միլան | Իտալիա | Ռեկորդատի Իռլանդիա ՍՊԸ, Ռահենս Իստ, Ռինգասկիդի, Քո. Քորկ | Իռլանդիա | Դ | 20069/1 15.09.2021 |